



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

18 ապրիլի 2010 թ.

Առաջարկություններն ու դիտողությունները

ՀՀ Ազգային ժողովի կողմից մշակված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Մամուլի աջակցության «ԻՆՏԵՐՆՅՈՒՄ» հասարակական կազմակերպությունը ողջունում է վիճարկության և գրապարտության ապաքրեականացման նախաձեռնությունը:

Այնուամենայնիվ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի (Նախագիծ) առումով ցանկանում ենք Ձեր ուշադրությանը ներկայացնել Մամուլի աջակցության «ԻՆՏԵՐՆՅՈՒՄ» հասարակական կազմակերպության (Ինտերնյուս) առաջարկություններն ու դիտողությունները, որոնք նպատակառոտ դրված են հնարավորինս կատարելագործելու խոսքի և մամուլի ազատությանն, ինչպես նաև անձանց պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանությանն առնչվող օրենսդրությունը:

1. Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի երկրորդ կետից («**վիճարկանք**» սահմանումը) հանել «կարծիքը կամ գնահատող դատողությունը (value judgement)» ձևակերպումը:

Հիմնավորում

Այս առաջարկության նպատակն է, նախ բացառել հնարավոր բացասական հետևանքները ժողովրդավարության հիմնաքարերից մեկի՝ խոսքի ազատության վրա, երկրորդը ապահովել ՀՀ օրենսդրության համապատասխանությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հետ: Հետամուտ լինելով առաջարկին կնվագեցվի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ՀՀ դեմ ընդունված հնարավոր որոշումների թիվը:

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (*Oberschlick v. Austria No. 2* (§34) (1 July 1997)), դեռ 1997 թ-ին հաստատել է, որ խոսքի ազատությունը ներառում է ոչ միայն կարծիք/գնահատող դատողություն կամ տեղեկատվությունն ազատ

արտահայտելու իրավունքը, այլ նաև դրանք ներկայացնելու ձևը: Դեռ ավելին, համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման (In Sunday Times v. UK) խոսքի ազատությունը տարածվում է նաև այն արտահայտությունների վրա, որոնք կարող են վիրավորել, ցնցել կամ անհանգստացնել: Բացի դա, նույն դատարանի Castells v. Spain գործի քննության արդյունքում, դատարանի կողմից պարզաբանվեց, որ կարծիքները, ենթադրությունները և քննադատությունները պաշտպանված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով:

Այսպիսով, ներառելով կարծիք/գնահատող դատողություն եզրույթը «վիրավորանք» սահմանման մեջ կվտանգվի խոսքի ազատության իրականացումը և կվտանգվի հանրության իրավունքը ստանալու բազմակողմանի տեղեկատվություն: Ավելին, խոսքի ազատության սահմանափակումը երբևէ չի արդարացվի, եթե այն կարող է բացասական հետևանք ունենալ: Այն կարող է բացասաբար անդրադառնալ խոսքի և մամուլի առանց այն էլ սահմանափակ ազատության վրա, հանգեցնելով ոչ միայն ռեպրեսիվ մեխանիզմների առաջացում, այլև ինքնագրաքննության խորացում:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 6-րդ մասի «դ» կետի երկրորդ և երրորդ, ինչպես նաև 7-րդ մասի «գ» կետի առաջին, երկրորդ և երրորդ ենթակետերով նախատեսված փոխհատուցման վճարները, մեր կարծիքով, անհիմն մեծացված են և պետք է առնվազն կրկնակի անգամ նվազեցվեն:

Հիմնավորում

Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ զարգացող պետությունում ինչպիսին է Հայաստանը, կայացման փուլում են գտնվում նաև Զանգվածային լրատվամիջոցները, որոնց կողմից նման տույժերի վճարումը կվտանգի նրանց առանց այն էլ դժվարին գոյությունը: Այդ խնդրին բազում անգամ անդրադարձել են միջազգային տարբեր կառույցներ: Մասնավորապես, Խոսքի և արտահայտման ազատության գծով ՄԱԿ-ի հատուկ հանձնակատարը և ԵԱՀԿ լրատվության ազատության գծով ներկայացուցիչը իրենց կողմից ընդունված Խոսքի ազատության աջակցությանն ուղղված միջազգային մեխանիզմների վերաբերյալ համատեղ հայտարարությամբ 2000 թ-ին ամրագրել են, որ սանկցիաները չպետք է չափազանց մեծ լինեն, որպեսզի բացասական ազդեցություն չունենան խոսքի և արտահայտման ազատության, ինչպես նաև տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունների վրա:

*Հարգանքով,
Մովսես Հակոբյան*

«Բնտերնյուս» ՀԿ